*Հավելված N1*
*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*
*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԵԲԿ-ԳՀԾՁԲ-23/6»

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար գույքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԲԿ-ԳՀԾՁԲ-23/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ՝ 09.10.2023 թվականին ժամը 23:57 ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 10.11.2023 թվականին տրամադրված պարզաբանումները՝

**Հարցադրում.**

Հարգելի Պատվիրատու,

Խնդրում ենք տրամադրել պարզաբանում Գույքագրման ծառայության մատուցման ԵԲԿ-ԳՀԾՁԲ-23/6 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրի վերաբերյալ:

Մասնավորապես.

1. Տեխնիկական բնութագրով սահմանված է, որ Գույքագրման աշխատանքներն սկսելուց առաջ կատարողը պատվիրատուին՝ համաձայնեցման և հաստատման համար, ներկայացնում է գույքագրման անցկացման մեթոդաբանություն: Աշխատանքները սկսվում են մեթոդաբանության երկկողմ հաստատումից հետո:

Սույն պարբերությունը հակասում է ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» հաստատված հրամանին: Հարցը կայանում է նրանում, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի.

- Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված է, որ գնման առարկայի բնութագիրը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տվյալ դեպքում Պատվիրատուի կարիքներից ՛գույքագրման ծառայությունները, ինչի գործընթացը արդեն իսկ սահմանված է ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 հրամանով: Ուստի, յուրաքանչյուր այլ լրացուցիչ պահանջ վարչական բեռ է և հակամրցակցային պայման է:

Ուստի ,այս կետը պետք է հանել տեխնիկական բնութագրից:

2. Գույքագրման աշխատանքները կատարողը պատվիրատուին հանձնում է փուլային՝ ըստ ստորաբաժանումների և հիմնական միջոցների տեղակայվածության: Յուրաքանչյուր ստորաբաժանման գույքագրման աշխատանքներն ավարտելուց հետո կատարողը պատվիրատուին հանձնում է տվյալ ստորաբաժանման գույքագրման ցուցակը և համեմատական տեղեկագիրը (երբ առկա են շեղումներ)՝ տպված և ստորագրված հանձնաժողովի անդամների և նյութական պատասխանատու անձանց կողմից:

Սույն պարբերությունը հակասում է ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման

կարգը հաստատելու մասին» հաստատված հրամանին, ինչպես նաև Պատվիրատուի կողմից իսկ սահմանված տեխնիկական բնութագրի:

Մասնավորապես, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 հրամանի 4.1-րդ կետի պահանջներին՝ գույքագրման համեմատական տեղեկագրերի կազմում: Համեմատական տեղեկագրերում արտացոլվում են գույքագրման արդյունքները, այսինքն՝ հաշվապահական հաշվառման և գույքագրման ցուցակների տվյալների միջև տարբերությունները:

Սակայն, Պատվիրատուի առաջարկով գույքագրումը և պիտակավորումն իրականացնելու է փուլային ըստ ստորաբաժանումների, ինչ հնարավոր չէ իրականացնել թե տեխնիկապես, թե բովանդակային՝ մասնավորապես պիտակների մշակման գործընթացը: Պիտակների մշակումը ենթադրում է ամբողջական հիմնական միջոցների գույքագրում՝ բացահայտում, վերջնական ցուցակների կազմում, համեմատական տեղեկագրերի կազմում, որից հետո ըստ ամբողջական բացահայտված գույքերի՝ տեղը /սենյակը, պահեստը և այլ/, գույքերի նկարագրությունը /բնութագրումը/, որից հետո գեներացվում են՝ ըստ շտրիխ կոդի և/կամ քյու ար (QR) կոդի: Նման պահանջը հիմնավորված չէ, չի համապատասխանում գույքագրման սկզբունքներին և արհեստական խոչընդոտներ է առաջացնում:

Ելնելով վերոգրյալից, ներկայացված պահանջները հակասում են ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 հրամանի 4.1-րդ կետի պահանջներին, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին՝ գնման առարկայի բնութագիրը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար **<u>չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը</u>**.

3. Խնդրում ենք պարզաբանել և հստակեցնել, ինչ «տեխնիկական տեղեկատվության հավաքագրման» մասին է խոսքը գնում, հստակ սահմանելով նաև տեխնիկական տեղեկատվության հավաքագրման եղանակները:

4. Հիմնական միջոցների վիճակի գնահատում: Հիմնական միջոցների վիճակը գնահատվում է հիմնվելով նախապես հաստատված դասակարգման չափորոշիչների վրա (դասակարգման չափորոշիչները արտացոլվում են գույքագրման անցկացման մեթոդաբանության մեջ):

Սույն պարբերությունը հակասում է ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» հաստատված հրամանին: Հարցը կայանում է նրանում, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի.

- Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված է, որ գնման առարկայի բնութագիրը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տվյալ դեպքում Պատվիրատուի կարիքներից ՛գույքագրման ծառայությունները, ինչի գործընթացը արդեն իսկ սահմանված է ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 հրամանով: Ուստի, յուրաքանչյուր այլ լրացուցիչ պահանջ վարչական բեռ է և հակամրցակցային պայման է:
- Միաժամանակ, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 հրամանի գնահատումը վերաբերվում է բացահայտված չհաշվառված օբյեկտներին, որոնց գնահատումը պետք է իրականացվի Պատվիրատուի հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան:

Այս պարբերությունը Պատվիրատուն պարտավոր է հանել:

5. Յուրաքանչյուր պիտակի վրա տպագրվում է կազմակերպության անվանումը, հիմնական միջոցի անվանումը, գույքահամարը, թվային կոդերը՝ շտրիխ կոդը և քյու ար (QR) կոդը:

Խնդրում ենք, հստակ պարզաբանել և սահմանել «շտրիխ կոդի» ներքո գեներացվող տեղեկատվությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քյու ար (QR) կոդը պետք է պարունակի հիմնական միջոցի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն՝ անվանում, տարեթիվ, գործարանային, գույքային համար և այլ նշումներ:

**Պարզաբանում**

Հարգելի մասնակից,

Ի պատասխան Գույքագրման ծառայության մատուցման ԵԲԿ-ԳՀԾՁԲ-23/6 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրի վերաբերյալ Ձեր հարցերին, պարզաբանում ենք.

1. Գույքագրման աշխատանքներն սկսելուց առաջ կատարողը պատվիրատուին՝ համաձայնեցման և հաստատման համար, ներկայացնում է գույքագրման անցկացման մեթոդաբանություն: Աշխատանքները սկսվում են մեթոդաբանության երկկողմ հաստատումից հետո:

Սույն պարբերությունը վերաբերվում է աշխատանքների կատարման պլանին, ձևաչափերին, կազմակերպչական հարցերին և ժամերին, որը Կատարող կողմը պետք է նախապես համաձայնեցնի Պատվիրատու կազմակերպության հետ, քանի որ վերջինս հանդիսանալով հիվանդանոց, պետք է կարողանա այնպես համակարգել գույքագրման աշխատանքները, որպեսզի դրանք չխոչընդոտեն մատուցվող բժշկական ծառայությունների իրականացմանը:

2. Գույքագրման աշխատանքները կատարողը պատվիրատուին հանձնում է փուլային՝ ըստ ստորաբաժանումների և հիմնական միջոցների տեղակայվածության: Յուրաքանչյուր ստորաբաժանման գույքագրման աշխատանքներն ավարտելուց հետո կատարողը պատվիրատուին հանձնում է տվյալ ստորաբաժանման գույքագրման ցուցակը և համեմատական տեղեկագիրը (երբ առկա են շեղումներ)՝ տպված և ստորագրված հանձնաժողովի անդամների և նյութական պատասխանատու անձանց կողմից:

Սույն պարբերությունը չի հակասում ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» հաստատված հրամանին և չի կարող հանգեցնել գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, քանի որ հենց նույն հրամանում **Կազմակերպության հիմնական միջոցների ցուցակների հավելվածները ևս կազմված են ըստ առանձին կառուցվածքային ստորաբաժանումների, իսկ հրամանի 2.4 կետով նշվում է նաև դրանք ինքնուրույն կազմելու հնարավորության մասին:**

Մեր կազմակերպության համար առանցքային է աշխատանքների փուլային կատարումը, քանի որ կազմակերպությունն ունի 2 մասնաշենք և մի շարք ստորաբաժանումներ, որոնք գտնվում են տարբեր հասցեներում:

Իսկ ձեր մատնանշած շեղումների բացահայտումը կարող է իրականացվել ցուցակների կազմման վերջում՝ համեմատական տեղեկագրերի հիման վրա:

3. Տեխնիկական տեղեկատվության հավաքագրումը հստակեցված է տեխնիկական բնութագրի՝ գույքագրման ծառայություններն կատարողի կողմից իրականացվող ընթացակարգի 8-րդ կետով:

4. Հիմնական միջոցների վիճակի գնահատում: Հիմնական միջոցների վիճակը գնահատվում է հիմնվելով նախապես հաստատված դասակարգման չափորոշիչների վրա (դասակարգման չափորոշիչները արտացոլվում են գույքագրման անցկացման մեթոդաբանության մեջ):

Քանի որ գույքագրումն իրականացվում է գույքի հետագա շահագործման հնարավորությունների ուսումնասիրման, կառավարչական որոշումների կայացման և կազմակերպության հաշվապահական հաշվառման արժանահավատության ապահովման համար, ուստի հիմնական միջոցների վիճակի գնահատումն անհրաժեշտ է: Ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 2000թ. հունիսի 2-ի թիվ 102 Հրամանի 2.13 կետով սահմանված է. <<Փչացած, ոչ պիտանի ակտիվների համար գույքագրման հանձնաժողովը կազմում է առանձին ակտ՝ նշելով ոչ պիտանիության պատճառները և առաջարկություններով հանդերձ ներկայացնում է կազմակերպության ղեկավարին>>:

Ուստի այս կետը չի կարող լրացուցիչ պահանջ, վարչական բեռ և հակամրցակցային պայման լինել և վերաբերվել միայն բացահայտված չհաշվառված օբյեկտներին (սա սահմանված է 3.1.3 կետով), քանի որ այն իրենից գույքի վիճակի գնահատում է ներկայացնում:

5. Յուրաքանչյուր պիտակի վրա տպագրվում է կազմակերպության անվանումը, հիմնական միջոցի անվանումը, գույքահամարը, թվային կոդերը՝ շտրիխ կոդը և քյու ար (QR) կոդը:

Այս կետով պարզաբանում ենք, որ «շտրիխ կոդի» ներքո գեներացվող տեղեկատվությունը կարող է լինել միայն գույքային համարը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԵԲԿ-ԳՀԾՁԲ-23/6» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Զինա Թովմասյանին:

Հեռախոս՝ 010 24 80 00:

Էլեկտրանային փոստ՝ yerevan.gnum@mail.ru

«ԵԲԿ-ԳՀԾՁԲ-23/6» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: